ԳՈՒՇԽԱՌԱՏ

Նամակերտից դէպի հիւսիս, երկու ֆարսախի վրայ է ընկած Գուշխառատը, ուր երկու տարի առաջ, 1916 թուին ապրելիս են եղել 25 տուն հայեր 152 շնչով. այժմ մնացել է միայն մէկ տուն բնիկ, բնակչութիւնը 1917 թուին, 400 հոգուց բաղկացած թուրք աւազակային խմբի հարստահարութիւնից քայքայւում ու համարեա քարուքանդ է լինում. դրա վրայ նա յուսահատ թողնում է իր տուն ու տեղը և գաղթում Փէրիայի միւս հայաբնակ գիւղերը։

Գիւղում կայ Ս. Յովհաննէս եկեղեցին, որի սրբազան սպասների մի մասը գտնւում է Նամակերտում։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	5
2	Չունեոր	3
3	Միջակ	—
4	Ունեոր	—
5	Հարուստ	—
	Ընդամենը	8

Մանոր։—Փէրիայի գաւառում բացի վերոյիշեալ հայաբնակ գիւղերից, կան նաև լուսաբնակ, թրքաբնակ և վրացաբնակ գիւղեր, որոնք գրեթէ ոչնչով չեն տարբերւում հայաբնակներից։ Այս պատճառով էլ զանց եմ առնում նկարագրել վերոյիշեալ լուս, թուրք և վրացի ժողովրդի բնակած գիւղերը։

Այժմ առաջ եմ բերում 1856—1918 թուերի ստատիստիկան.